ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/41 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք. Երևան 22.12.2021թ.

Հայտերի բացումը տեղի ունեցավ 17.12.2021թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝
Էդգար Էվոյան – ԱՌՖԻ հարթակի ծրագրի ղեկավար
Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ
Աննա Սաղաբայան – Հանրային կապերի և հաղորդակցման ստորաբաժանման ղեկավար
Հայկ Թադևոսյան – Բիզնեսի զարգացման տնօրեն
Կարեն Ներսեսյան – Ֆինանսների և հաշվապահության բաժնի ղեկավար
Շանթ Գարաքուլահեան – գրաֆիկ դիզայներ
Համակարգող՝ Գրիգորի Ոստանիկյան

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/41 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր է ներկայացրել.

Մասնակից	ՀՎՀՀ	Հեռախոսահամար	Էլ. հասցե
«ՄԱՐՕԳ ՄԱՐՔԵԹԻՆԳ» ՍՊԸ	00875841	091 544 511, 010 544 511	info@marogmarketing.com
«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	00207936	055 996622	malv_mg@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «ՄԱՐՕԳ ՄԱՐՔԵԹԻՆԳ» ՍՊԸ կողմից ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են սահմանված պայմաններին:

3.2 «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից ներկայացրած հայտում ներառված չէին հրավերի Հավելված 6-ով պայմանագրի հավելվածի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հայտերի գնահատումը կասեցվում է մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա

Сканировано с CamScanner

ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից ներկայացվում է պարզաբանում, համաձայն որի «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից ներկայացրած գնման հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և շտկման անհրաժեշտությունը բացակայում է: Պարզաբանումը ուսումնասիրվեց պատվիրատուի իրավաբանական ծառայության կողմից, տրվեց դրական եզրակացություն: Իրավաբանական ծառայության դրական եզրակացության հիման վրա գնահատող հանձնաժողովը ընդունում է մասնակցի կողմից ներկայացված պարզաբանումը և որոշում «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ներկայացրած գնման հայտը գնահատել համապատասխանող հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Մասնակցների առաջարկած գինը.

Համաձայն Գնումների գործընթացի իրականացման կարգի /526-Ն որոշում/, 40-րդ կետի 5-րդ ենթակետի, մասնակիցները 22.12.2021թ. հրավիրվել է գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունների: Բանակցությանը ներկայացել է «ՄԱՐՕԳ ՄԱՐՔԵԹԻՆԳ» ՍՊԸ-ն, իսկ *«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ*-ն բանակցությանը չի ներկայացել: Բանակցությունների արդյունքում մասնակիցների առաջարկած գները ներկայացվում է աղյուսակում:

Մասնակցների անվանումը	Արժեք /իքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/	Ընդհանուր գին ՀՀ դրամ	Արժեքը բանակցությունից հետո	Ընդհանուր գինը բանակցությունի ց հետո
ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 **ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**				
Նախահաշվային գինը -				
«ՄԱՐՕԳ ՄԱՐՔԵԹԻՆԳ» ՍՊԸ	**23.300.000**	**27.960.000**	**20. 800. 000**	**24.960.000**
«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	**100. 000. 000**	**100. 000. 000**	**100. 000. 000**	**100. 000. 000**

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/41 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ է զբաղեցնում «ՄԱՐՕԳ ՄԱՐՔԵԹԻՆԳ» ՍՊԸ -ն:

5.2 «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/41 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանվում է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

5.3 Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի տասնհինգ տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Сканировано с CamScanner

Հանձնաժողովի նախագահ	Էդգար Էվոյան	
Անդամներ	Աննա Սաղաբայան	
	Հայկ Թադևոսյան	
	Կարեն Ներսեսյան	
	Շանթ Գարաքուլահեան	
Համակարգող	Գրիգորի Ոստանիկյան	

Сканировано с CamScanner